ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 25
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

25.09.2017թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77՝-77հ հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2017 թվականի հունվարի 20-ի N 15-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի /հանձնաժողովի նախագահ/, ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի առաջատար մասնագետ Արմեն Շահվերդյանի, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Սասուն Խեչումյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Սպարտակ Ղուբաթյանի, ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի պետ Վարդան Հովհաննիսյանի, սոցիալական ապահովության բաժնի պետ Վալերի Ջաղինյանի, քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ Արման Մխիթարյանի, ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հախինյանի, տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջատար մասնագետ Վահրամ Դանիելյանի, բնապահպանության բաժնի պետ Արտակ Դեմիրչյանի, բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանի, կրթության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարոյանի, մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետներ Միհեր Մելիքյանի, Ռուբեն Մխիթարյանի և զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի առաջատար մասնագետ Ժիրայր Բասմաջյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման, ՔԿԱԳ, արտակարգ իրավիճակների և պաշտպանության, առողջապահության, քաղաքաշինության, պաշտպանության, սոցիալական պաշտպանության, բնության և շրջակա միջավայրի պահպանության, ընդերքօգտագործման, կրթության, մշակույթի, սպորտի, տրանսպորտի և առևտրի և ծառայությունների ոլորտներում, ինչպես նաև համայնքային ենթակայության 6 նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է << Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Ալավերդի համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Արմեն Շահվերդյան _____

Արտավազդ Բեջանյան _____

Վարդան Հովհաննիսյան _____

Էդգար Հախվերդյան _____

Սասուն Խեչումյան _____

Գագիկ Հախինյան _____

Արման Մխիթարյան _____

Սպարտակ Ղուբաթյան _____

Վալերի Ջաղինյան _____

Արտակ Դեմիրչյան _____

Սամվել Խառատյան _____

Անահիտ Բարոյան _____

Միեր Մելիքյան _____

Ռուբեն Մխիթարյան _____

Վահրամ Դանիելյան _____

Ժիրայր Բասմաջյան _____

Համայնքի ղեկավար՝
Կարեն Փարեմուզյան _____